Ստեփան Զորյան

ՀԱԶԱՐԱՆ ԲԼԲՈՒԼ

1

Լինում է, չի լինում, մի ժլատ թագավոր է լինում։ Այս թագավորն իր պալատի առաջ ունենում է մի մեծ այգի՝ ամեն բարիքով լիքը, ամեն տեսակ մրգերով առատ, և այնքան փարթամ ու դեղեցիկ, որ աշխարհի ամեն կողմից գալիս են տեսնելու։

Ի՜նչ ծառեր, ի՜նչ պտուղներ, ի՜նչ կանաչ ու ծաղիկներ. տեսնողը՝ զարմանքից մնում է բերանը բաց։ Ու այգու մեջ էլ դանգակի պես մի շատրվան, որի ամեն մի շիթը ծիածան է կազմում և տեսնողի աչքը շլացնում։

Բայց այդ պտուղները թագավորը ո՛չ ինքն է ուտում, ո՛չ ուրիշի է տալիս։

Եվ ահա օրերից մի օր աղքատի մինը գալիս է այդ այգին՝ աղորմություն ուզելու։ Թագավորի այգեպանը, որ անխախտ կատարում էր թագավորի հրամանը, ինչպես ուրիշներին, սրան էլ ոչինչ չի տալիս և դեռ բարկանում է ու քշում։

— Կորի՛ր,— ասում է,— դու էիր պակաս թագավորի այգուց բան ուզես։

Եւ է դառնում աղքատն այստեղ ու անիծում.

— Թո՛ղ չորանա այգին. պտուղ չտա էլ երբեք, և հավիտյան կարոտ մնաք կանաչ ծառի ու պտուղի։

Ասում է, չի ասում, խոսքի կեսը դեռ բերանում, մին էլ տեսնում են՝ այգին փոխվեց—ծառերը տերևաթափ եղան, թուփ ու ծաղիկ խանձվեցին, կանաչները սևացան և աղբյուրը չորացավ։

Լուրը տվին թագավորին, ու փրփուր կտրեց թագավորն իր գահին։

— Ո՛վ է,— ասավ,— համարձակվել այդպես. կանչեցե՛ք շուտ աղքատին այստեղ...

Մարդիկ ելան ամեն կողմ և մուննաթիկ գցեցին։

Աղքատը չէ՛ևաց։

Ձիեր հնձան և ալացան ամեն ճամփով։

Բայց աղբատի հետքն ու շուրը չգտան։

— Ի՞նչ անենք հիմա, որ մեր այգին կանաչի,— ասավ տխուր թագավորն իր մեծերին։

Ու մեծերը խորհուրդ տվին։

— Ապրած կենաս, մեծ թագավոր, կանչիր երկրի բոլոր գիտուններին և իմաստուններին բոլոր. թող ամենքը գան խորհուրդ ու միտք անեն, թե ո՞նց անենք, որ մեր այգին կանաչի։

Ու կանչեցին երկրի բոլոր գիտուններին և իմաստուններին բոլոր։ Եկավ հազար ջահել խելոք, եկավ հազար ճերմակ միրուք։ Խորհուրդ արին յոթ օր, խորհուրդ արին յոթ գիշեր ու ասին։

— Թագավորն ապրած կենա, պետք է շինել մի տաճար՝ հազար սյուն, քառասուն գմբեթ, մի այնպիսի տաճար, որի նմանը չլինի, ու այնտեղ աղոթել աստծուն, որ նա գթա, այգուն նորից կանաչ տա։

Հավան կացավ թագավորն այս մտքին ու հիմք դրեց եկեղեցուն։ Կանչեց երեք հարյուր հազար բանվոր, որ քար կըտրեն, երեք հարյուր հազար մարդ, որ քար կրեն, երեք հարյուր հազար քարտաշ, որ քար տաշեն, երեք հարյուր հազար վարպետ, որ պատ շարեն։

Եկան բոլորը ու— թըր՛խկ, հա թըր՛խկ, թըր՛խկ, հա թըր՛խկ — քար կտրեցին, քար կրեցին, քար տաշեցին, պատ շարեցին։

Ու երեք տարում կանգնեցրին մի տաճար. ի՞նչ տաճար, ինքն աղոթք էր որ կար— հազար սյուն, քառասուն գմբեթ։

Երբ ամեն ինչ եղավ պատրաստ, մեծ հանդեսով խաչվախաչվառով, եպիսկոպոսներով օրհնեցին ու օծեցին, և թագավորը կանգնեց աղոթքի։

Բայց հազիվ սկսել էր, բուք բարձրացավ տաճարում, և մի ալևոր երևաց նրան։

— Ամեն բան լավ է,— ասավ,— թագավոր, տաճարիդ միայն մի բան է պակաս։

Զարմացած թագավորն ուզեց հարցնել, թե ի՞նչ է պակաս, բայց ծերունին ինչպես երևացել էր, այնպես էլ աներևութացավ հանկարծ։

Մյուս օրը թագավորը հրամայեց քանդել եկեղեցին և նորը շինել, որ ոչ մի բան պակաս չլինի։

Քանդեցին և նորից— Բրը՛խկ, հա Բրը՛խկ, Բրը՛խկ, հա Բրը՛խկ— երեք տարում նորը կանգնեցրին։

Օծելուց հետո թագավորը նորից դնաց աղոթքի. և հազիվ սկսել էր, ճերմակ ծերունին երևաց նորից։

— Թագավոր,— ասավ,— ամեն բան լավ է, տաճարիդ միայն մի բան է պակաս...

Թագավորն էլի ուզեց հարցնի՝ ի՞նչ, բայց ծերունին առաջվա պես չքացավ նորից։

Թագավորը հրամայեց կրկին քանդել տաճարը ու նորը շինել, որ ոչ մի բան պակաս չլինի։

Կրկին քանդեցին ու երեք տարում կրկին նորը շինեցին։

Դարձյալ օծեցին, ու թագավորը նկավ աղոթքի։

Հազիվ սկսել էր աղոթքն իրա, ճերմակ ծերունին երևաց դարձյալ։

— Թագավոր,— ասավ,— տաճարդ կատարյալ է, պայծառ, միայն մի բան է պակաս։

Այդ խոսքի վրա թագավորը բռնեց նրան ու «ի՞նչն է պակաս, ասա՛», հարցրեց։

— Թագավոր,— ասավ ծերունին,— աղոթքով այդին չի կանաչի. աղոթքի տեղ ուրիշ բան է հարկավոր։

— Ի՞նչ, ի՞նչ,— հարցրեց թագավորն անհամբեր։—

Ասա տեսնեմ, ո՛վ Ծերունի. դրա համար ես չեմ խնայի իմ արքայական դանձն ու ոսկին, միայն թե իմ այգին առաջվա նման կանաչի նորից։

— Ոչ, Թագավոր,— ասավ Ծերունին,— նա ձեռք չի բերվի դանձով ու ոսկով և ո՛չ էլ արքայական խոսքով... Քո տաճարին և այգուն հարկավոր է Հազարան Բլբուլ։

— Իսկ ո՞րտեղ է դա, ո՞րտեղից բերենք այդ բլբուլը,— հարցրեց Թագավորն ուրախ։

— Ով Թագավոր,— ասավ Ծերունին,— հեռու է նա։ պետք է գնալ Ջոր-Ջորատան, Անդ-Անտպատ, ուր քարվան չի քոշում, ուր հավք չի թռչում. այնտեղ, ուր երբեք մարդու ոտք չի տեսել. իսկ համփեն նրա ծածկված է արյուններով, դիակներով, և ոչ մի հողածին դեռ չի հասել այնտեղ...

Ասավ Ծերունին ու անհայտացավ նորից։

Թագավորը մնաց մենակ իր մտքերի հետ։ Տխուր-տրտում միտք էր անում, թե ո՞նց բերի Բլբուլը Հազարան, որ իր այգին կանաչի նորից։ Տխուր-տրտում միտք էր անում օրեր, ամիսներ...

Միտք էր անում ու հալվում...

2

Այս Թագավորն ուներ երեք տղա՝ Խարին, Ջարին ու Արին։ Երկու մեծը խելոք էին ու Թագավորի սիրելին, իսկ փոքրին համարում էին խելքից պակաս ու հիմար։ Մինչ մեծերը նըստում-վեր էին կենում իշխանների ու մեծամեծների հետ, փոքրը՝ Արին, գնում նստում էր ծառա մարդկանց մոտ ու խաղում նրանց երեխաների հետ, որսի էր գնում, ջրիդ ու նիզակ խաղում։ Ու այդ պատճառով պալատում ոչ ոք չէր սիրում նրան։

«Հիմար է», ասում էին ու թողնում, որ գնա ծառա մարդկանց մոտ։ Ու ամբողջ օրը գոմում, ախոռում՝ չէր էլ նայում ի՛նչ է կատարվում իրենց պալատում։ Այնինչ մեծ եղբայրները, հենց որ տեսան իրենց Հորը տրտում, ծունկ չոքեցին նրա առաջ ու հարցրին տխուր.

— Ի՞նչ վիշտ ունես, հայրիկ, ասա մեզ, ի՞նչ իղձ ունես՝ մենք կկատարենք։

— Վիշտս խորն է,— ասավ թագավորն ու տնքաց,— և դուք չեք կարող այն բուժել, իսկ իղձս՝ անհասանելի...

— Ասա՛, հայրիկ, ասա՛, ինչ որ ունես։ Ինչ որ ասես, մենք կկատարենք, ի՛նչ որ ուզես, մենք կբերենք...

Որդիքն այսպես շատ որ խնդրեցին, թագավորը սիրտը բաց արավ ու բոլորը պատմեց, թե այսպես ու այսպես. որպեսզի մեր չորացած այգին կանաչի, պետք է բերել Բլբուլը Հազարան։

— Մենք կբերենք,— ասին խարին, Ջարին միասին։

— Բայց հեռու է, որդիք, ու ճամփեն նրա՝ մութ ու անհայտ։ Պետք է գնալ հեռո՜ւ-հեռու—Ջոր-Ջորստան, Անդ-Անապատ, ուր քարվան չի քոչում, ուր հավք չի թռչում...

— Մենք կրիրենք,— ասին խարին, Ջարին ու վեր կացան, ղրահ հագան, զենք կապկցին, ձիեր հնծան, պաշար առան, ճամփա ընկան։

Այդ ժամանակ Արին խաղ էր անում ախոռում։ Հենց որ լսեց եղբայրներն ո՛ւր են գնում՝ ինքն էլ ղրահ հագավ, զենքեր կապեց, ձի նստեց ու միացավ նրանց։

— Ոչի՛նչ, թո՛ղ գա,— ասին եղբայրները,— ճամփին մեզ ծառայություն կանի։

Ու երեքով գնացին։

Գնացին, գնացին, օրեր, գիշեր գնացին... գնացին դեպի հեռո՜ւ-հեռո՜ւ— Ջոր-Ջորստան, Անդ-Անապատ, ուր քարվան չի քոչում, ուր հավք չի թռչում։

Գնացին տեսան երեք ճամփա, մեջտեղը մի ծերունի նըստած։

— Բարի աջողում, պապի,— ասին։

— Բարին ձեր արևին, տղերք։

— Մի ասա մեզ, պապի, ո՞ւր են գնում այս ճամփանները ջոկ, ու ի՞նչ ճամփաներ են սրանք։

— Այս մեկը,— ասավ ծերունին,— գնում է Բաղդադ, սրանով հազարը գնում է, հազարը գալիս. այս մյուսը գնում է Խորասան, սրանով հազարը գնում, մինը գալիս. իսկ այս

վերջինը... շատ դժվար ճամփա է այս վերջինը... Սրանով ո՛վ գնաց, հար-հավիտյան կերթա՛, կերթա՛, էլ չի դառնա...

Եղբայրները այստեղ կանգնեցին ու միտք արին, թե ո՛ր ճամփով գնան։

— Եկեք դուք գնացեք Բաղդադ ու Խորասան,— ասավ Արին,— ես էլ կերթամ էս ճամփով, որ ով գնում՝ ետ չի դառնում։

— Լավ,— ասին եղբայրները և ուրախացան իրենց մըտքում, որ կազատվեն վերջապես հիմարից, ու երեքը միասին պայման դրին, թե ո՛վ շուտ վերադառնա, այստեղ սպասի մյուսներին։

Ասին, համբուրվեցին ու ճամփա ընկան։

Մեծ եղբայրը գնաց դեպի Բաղդադ. գնաց, Ճանապարհի կիսին հանդիպեց մի քյոշկ ու սարայի. կանգնեց ու մտածեց.

«Ջուր ինչո՛ւ գնամ սպանվեմ, լա՛վ է մտնեմ այս սարայը, ծառայությյուն անեմ, ապրեմ...»։

Միջնեկ եղբայրն էլ գնաց դեպի Խորասան։ Գնա՜ց, գնաց, շատն ու քիչը ճամփան գիտի, գնաց շատ փորձանքների մեջ ընկավ, ձին ու շորերը ծախեց կերավ և, վերջը, չոփի պես տկլոր, ընկավ Խորասան ու դարձավ բաղնիսի ծառա։

Սրանք Թող մնան իրենց գործին, մենք լուր տանք փոքր եղբորից։

3

Եղբայրներից բաժանվելով գնաց Արին, գնա՜ց, գնաց այն տեղերը, ուր Ջորստան է, Անապատ, ուր քարվան չի քոչում, ուր հավք չի թռչում։ Գնաց հասավ մի աշխարհ, ուր կարմիր էր ամեն ինչ. ալ կարմիր էր հողը, կարմիր էր ծառ ու քար, ալ կարմիր էր երկինքը, ու արևը պայծառ...

Գնա՜ց, գնաց, շատն ու քիչն ինքը գիտի ու իր ձին, գնաց, մին էլ տեսավ մի ապարանք։

Ի՜նչ ապարանք— ամբողջ զմրուխտ ու լալ, հակինթ, ալ-

մաստ ու գոհար. փայլփլում է արևի տակ կարմիր փայլուն հրեղեն. ինքը երկինք է հասնում, բայց ո՛չ դուռ ունի, ո՛չ պատուհան։

«Ո՞վ է, տեսնես, ապրում այստեղ»,— ասաւ Արին ինքն իրեն ու նայեց վերև, նայեց ներքև. մարդ չերևաց ոչ մի տեղ։ Մին էլ— ահա՛ մի փերի... փերի մի ասի, մի լույս արեգակ, ձայն է տալիս վերևից.

— Ո՞վ ես դու, խեղճ տղա. ախո՜ս քեզ, ջահել տղա... Քանի շուտ է հեռացի՛ր, թե չէ հիմա՝ Կարմիր Դևը կերևա...

— Ի՞նչ ես վախեցնում, փերի քույրիկ,— ասաւ Արին ներքևից.— դեռ մի պատիվդ չառած, հացիդ կտորը չկերած, դառը չիբուխդ չքաշած, ինձ վախեցնո՞ւմ ես Կարմիր Դևով։

— Դու ինձ լսի՛ր, այ տղա,— ասաւ փերին զարհուրած,— շո՛ւտ հեռացիր այստեղից...

Բայց տղան կանդնել՝ չի շարժվում տեղից։

— Իսկ ո՞վ ես դու, փերի քույրիկ,— ասաւ Արին ներքևից,— ի՞նչ ես անում այս ամրոցում, որ ո՛չ դուռ ունի, ո՛չ պատուհան. ո՞վ է բերել, ո՞վ է փակել քեզ այստեղ։

— Օ՜, այ տղա, ես գերին եմ Կարմիր Դևի,— ասաւ աղջիկը լալով։— Նա եկավ մեր աշխարհն ավերեց, ինձ հափշտակեց մեր տնից ու գերի բերեց։ Դե շո՛ւտ, շո՛ւտ հեռացիր դու այս արյունոտ աշխարհից... Տե՛ս, նրա կերած մարդկանց արյունից կարմրել են հող ու երկինք, կարմրել են թուփ ու ծառ, կարմրել է արևը պայծառ։

— Ջո՛ւր է,— ասաւ,— փերի քույրիկ։ Ով էլ կուպի ծով գա, ես չեմ գնա։ Ես չեմ ծողնի քեզ մենակ։ Պետք է փրկեմ քեզ այստեղից։

— Ամա՜ն,— ասաւ փերին լալով,— մի տա քեզ մահու բերան. ծով ես մնամ այստեղ գերի, միայն դու ջահել կյանքդ փրկի...

Այսպես շատ խնդրից, աղաչեց փերին, բայց հիմար Արին ոտ չփոխեց։

— Որ այդպես է,— ասաւ փերին,— արի պահեմ՝ քեզ ամրոցում, որ Դևը գա, քեզ չտեսնի։

— Շնորհակալ եմ,— ասավ,— փերի քույրիկ, ես հենց Գևի համար եմ եկել։ Ես կմնամ այստեղ, միայն ասա, թե ո՞ր կողմից է նա գալու։

Ասավ-չասավ, մին էլ ահա հողը շարժվեց դղրդոցով ու սարի գլխին Գևն երևաց իր ավարով. ձեռներին բռնել էր նա երկու գերան՝ ամեն մինը քառասուն դազ, ու դրանց արանքն արել ամեն տեսակ շունչ ու գազան՝ վագր ու առյուծ, ինձ ու արջ, գել ու աղվես, եղնիկ, նապերու, էլ ի՛նչ իմանաս ինչ կենդանի... Բոլորն այսպես կալմիջ արած՝ բերում էր ամրոց։ Ու այդ բոլորը կանչում, ճչում, ոռնում էին աղեկտուր ու ղարհուր։

Նկավ Գևը, ինչպես վարար մի գետ, նկավ ինչպես ալավ բռնած կարմիր կրակ և գետ հեռվից, տղին տեսավ թե չէ, որոտաց.

— Ո՞վ ես,— ասավ,— ո՛վ հողածին, որ համարձակվել ես մտնել իմ հողը, մի՞թե իմ անունը չես լսել դու... Հապա չտեսա՞ր գյուղ ու քաղաք ամայի. ո՞նց չես տեսել ոսկորները ձորը լցրած... Բայց լավ է, — ասավ,— քու ոտով ես նկել. երկար ժամանակ մարդու միս չեմ կերել...

— Դեռ մի դրանց ալաստ, հետո խոսի,— ասավ Արին ու իջավ ձիուց։

Գևը ծիծաղեց.

— Ո՛վ չնչին մարդ,— ասավ,— ո՞վ ես դու, որ համարձակվում ես այդպես լեզու բանեցնել իմ դեմ. քանի հազար մարդ եմ կերել ու քեզնից էլ կտրիճ առավել։

— Ով էլ լինեմ, քո հոգեառն եմ ես,— ասավ Արին ու կանգնեց համարձակ։

Մռնչաց Գևը, հուր ու կրակ թափեց բերանից, թողեց բերած գազաններին ու գնաց տղի վրա։

Տարավ բերավ իր գերանը քառասուն դազ։ Գետինը թընդաց. նրա հարվածից հողն ու փոշին բարձրացան ամպի նման։

— Ափսո՞ս,— ասավ Գևը,— բան չմնաց այդ մարդուց, որ մի համն առնեի։

— Մնկ էլ արի,— ասավ Արին փոշու ամպի միջից։

Դևը կատաղեց, դևը փրփրեց ու գնաց եկավ այս անգամ հեռու տեղից։

Եկավ ու գերանը զարկեց ուժով։

Հողն ու փոշին դարձյալ ամպի նման բարձրացան երկինք։

— Ախո՜ս,— ասավ Դևը,— գնաց կորավ հողածինը հողի մեջ, մի մատ միս էլ չմնաց, որ դնեի ատամիս տակ։

— Հա՜-հա՜-հա՜,— ծիծաղեց Արին նորից փոշու ամպի միջից։

Դևերը ծիծաղ չեն սիրում։

Այդ ծիծաղից Դևն ավելի կատաղեց, ավելի փրփրեց։ Ու այս անգամ երկու գերանն էլ վրա բերավ։ Սար ու ձոր դղրդացին, ու է՛լ ավելի հող ու փոշի բարձրացավ երկինք։

— Ախո՛ս, ախո՛ս,— ասավ Դևը,— այնպես զարկեցի, որ հոտ քաշելու բան չմնաց։

Ու մոռացավ, որ հոտ քաշի, տեսավ Արին կանգնած առաջին։

— Դե հիմա հերթն իմն է,— ասավ Արին ու նետն արձակեց։

Դևը ոռնաց ու այս անգամ կրակի տեղ ծուխ արձակեց բերանից և թավալ-թավալ ընկավ գետին, շունչը փչեց։

Այստեղ Արին կարեց Դևի ականջները ու տարավ կարմիր ամրոցում փակված աղջկան։

Փերին ուրախացավ ու փաթաթվեց տղի վզով։

— Դե հիմի,— ասավ,— դու իմն ես, ես քոնը, արի պսակվենք։

— Չէ՛,— ասավ Արին,— ես նպատակ ունեմ, պետք է գնամ։ Պետք է գնամ բերեմ Բլբուլը Հազարան, որ մեր շոր այգին կանաչի նորից։

— Վա՛յ,— ասավ փերին,— մի՛ գնա, այ տղա. այդ ճամփան շատ դժվար է։ Արի, ավելի լավ է պսակվենք ու հանգիստ ապրենք մեզ համար։

— Չէ՛,— ասավ Արին,— դու իմ մեծ եղբոր նշանածը կլինես։ Ես ուխտ ունեմ, պետք է կատարեմ։

Ու նշան տվեց, նշան առավ և ճամփա ընկավ գնաց նո-
րից։

Գնաց դևպի հետո՛ւ, հետո՛ւ— Ջոր-Ջորատան, Անդ-Անա-
պատ, ուր քարվան չի քոչում, ուր հավք չի թռչում...

4

Գնա՜ց, գնաց, շատն ու քիչն ինքը դիտի ու իր ձին, գնաց
ընկավ մի աշխարհ, ուր սև էր ամեն ինչ. սև էր հողը, սև-սև
էին ծառ ու քար, սև էր երկինքը ու արև չկար։

Գնաց տեսավ մի սև ամրոց՝ դուռ-պատուհան դրած-փա-
կած։ Հոգնած, դադարած իջավ ձիուց ու ամրոցի դուռը թա-
կեց։ Մին էլ ահա մի աղչիկ, ի՜նչ աղչիկ, ո՛չ ուտես, ո՛չ
խմես՝ կանգնես ու նրա երեսին մտիկ անես... Այս սև ամ-
րոցում մի լույս-արեգակ։

Եկավ նազուկ քայլերով, դուռը բացեց ու մնաց կանգ-
նած։

— Բարի՛ տեսանք, իեերի քույրիկ,— ասավ Արին ու գլուխ
տվեց։

— Վա՜յ,— ասավ աղչիկը տխուր,— ո՞վ ես դու, այ տղա,
ո՞ր քամին է բիզ բերել, ո՞վ է դրկել քեզ այստեղ... շո՛ւտ,
շո՛ւտ հեռացի՛ր, թե չէ հիմա Սև Դևը կգա, պատառ-պատառ
կանի քեզ...

— Փերի քույրիկ— ասավ Արին,— դեռ մի պատիվդ չա-
ռած, հացիդ պատառը չկերած, դառը չիբուխդ չքաշած՝ ինձ
վախեցնո՞ւմ ես Սև Դևով։

— Լսի՛ր ինձ, այ տղա. չեմ խնայում քեզ հաց ու պատիվ,
բայց քանի գլուխդ ուսերիդ է, հեռացիր այստեղից... Գիտեմ,
տեսնում եմ հաղթել, անցել ես Կարմիր Դևի երկրից, բայց
սա Կարմիր Դևին նման չի։ Սա մարդ է կերել հազար-հազար,
աշխարհներ է ավերել ու մոխիր թողել... Սա յոթ գլուխ ունի,
յոթ բերան։

— Վնաս չունի,— ասավ Արին,— մի օր ծնվել, մի օր
պիտի մեռնենք, բայց մի ասա, ո՞վ ես դու և ի՞նչ ես ա-
նում այս սև աշխարհի սև ամրոցում։

— Ա՛խ, այ տղա, ես գերին եմ Սև Դևի,— առաջ փերին լալով։— Նա ավերեց մեր աշխարհը ու ինձ բերեց իրեն գերի։

— Լաց մի լինի, փերի քույրիկ,— ասաւ Արին աղջկան,— ես չեմ թողնի քեզ էստեղ, միայն մի քիչ հաց տուր ուտեմ։

Աղջիկ-փերին շատ զարմացավ տղի վրա, ափսոսաց, բայց քանի որ սոված էր՝ խղճաց ու կանչեց վերև։

Աղջիկը հաց բերեց, հաց կերան, խոսեցին, մին էլ ահա՛ տունը դողաց հիմքից։

— Այս ի՞նչ բան է,— հարցրեց Արին,— տունն ինչո՞ւ այսպես դողաց հանկարծ։

— Վա՛յ,— առաջ փերին,— Դևը գալիս է, այ տղա. արի պահեմ քեզ։

— Ի՞նչ պահես,— ասաւ,— գալիս է, թող գա։ Ես հենց նրա համար եմ եկել։

Մի քիչ կացան՝ Դևը եկավ. եկավ ինչպես մի սև սար։ Յոթ գլուխ ուներ, յոթ բերան։ Եկավ, բերից անթիվ անասուն ու գազան, բերից, լցրից դամերն ու եկավ վերև։ Ու հենց որ տեսավ տղին, մռնչաց յոթ բերանով։

— Ո՛վ ես,— ասաւ,— ո՛վ հողածին։ Հավքն իր թևով, օձն իր պորտով չի եկել այստեղ, դու ինչպե՞ս համարձակվեցիր... Մի՞թե իմ անունը չես լսել դու։

— Լսե՛լ եմ,— ասաւ Արին,— ու եկել եմ քու դեմ կռիվ։

Դևը ծիծաղեց.

— Հա՛-հա՛-հա՛։

— Կռի՞վ,— ասաւ,— հիմի՞ կուզես, թե առավոտ։

— Դու դիտես,— ասաւ Արին։

Դևը թե՝ մեր մեջ ադաթ կա, որ եկվորին պահենք, պատվենք, առավոտը կռվենք։

— Լավ,— ասաւ Արին,— առավոտը կռվենք։

Ասին, խոսին, հաց կերան միասին ու պառկեցին ջոկ սեներում քնելու։

Գիշերվա կեսին Դևը զարթնեց։

«Սա որ,— ասաւ,— իմ կարմիր եղբորը հաղթել է, ինձ էլ կարող է վնասել. ինչո՞ւ եմ առավոտը թողնում. գնամ հենց հիմի ուտեմ վերջացնեմ, յոթ տարի է մարդու միս չեմ կերել»։

Ու վեր կացավ լընդլընգալով գնաց դեպի տղի սենյակը։ Տունը նորից ժաժ եկավ։

Տղան զարթնեց։

— Դևը գալիս է,— ասավ։

Ասավ ու վեր թռավ տեղից։ Թուրը հանեց ու կանգնեց պատի տակ։

Դևը եկավ, ագահ բերանից թուք ու լորձանք թափելով։ Եկավ ու մռնչալով ընկավ քնած հյուրի տեղի վրա, որ միանգամից կուլ տա նրան։ Բայց վրա ընկնելու հետ Արին թուրը տարավ-բերից ու Դևի յոթ գլուխը միանգամից ցած գլորեց։

Ցած գլորից թև չէ՝ լույսը, լույսը բացվի ձեր վրա, արևի լույսը բացվեց սև աշխարհի վրա։ Լույսից զարթնեց աղջիկ-վերին, ելավ տեղից, տեսավ Դևը էլ չկա, ընկավ տղի վզով։

— Անհա՛դթ մնաս,— ասավ,— կտրիճ տղա։ Դե, ես քո՛նն եմ հիմա, դու իմը, արի՛ պսակվենք։

— Չէ՛,— ասավ Արին,— դու իմ միջնեկ եղբոր նշանածը կլինես։

Ու նշան տվեց, նշան առավ։ Հետո իջավ ներքև, ինչքան գալան, անասուն ու թռչուն էր բերել Դևը, բոլորին արձակեց, բայց թողեց դոմերից։

— Գնացեք,— ասավ,— նորից ձեր սարը, ձեր անտառը ու ձեր բները։

Բոլորն ուրախությունից ծուլ եղան, ճիչ ու կանչ արձակեցին, պտտվեցին տղի գլխով, ապա ամեն մեկը գնաց իր սարը, իր անտառը, իր բույնը։

Երեք օր Արին հյուր մնաց այստեղ ու երեք օրից հետո ղրահ հագավ, զենքեր առավ, ձին հեծավ ու ասավ աղջկան.

— Դե, մնաս բարով, փերի քույրիկ, ես գնացի։

— Ո՞ւր,— հարցրեց աղջիկը վախեցած։

— Գնում եմ, քույրիկ, Հազարան Բլբուլը բերելու։

— Վա՛յ,— ասավ աղջիկը,— մի՛ գնա։ Նրա ճամփան շա՛տ է դժվար, անդառնալի։ Հազարներ են գնացել, մինչև այսօր ետ չեն դարձել։ Դու ի՞նչ սրտով կամ ի՞նչ զենքով ես գնում։ Արի, խեղճ գլուխդ մի տուր մահու։

— Պետք է գնամ, քույրիկ,— ասավ,— վճռված բան է։

Պետք է գնամ բերեմ Բլբուլը Հազարան, որ մեր այգին կանաչի նորից։

Ասավ ու ճամփա ընկավ։

Ու գնաց նորից, գնաց Ջոր-Ջորատան, Անդ-Անապատ, ուր քարվան չի քոչում, ուր հավք չի թռչում...

5

Գնա՜ց, գնաց, շատն ու քիչը ճամփան գիտի, գնաց ընկավ մի աշխարհ։ Ի՞նչ աշխարհ. ամբողջն ավեր, ավերակ, ամբողջը մարդու ոսկորներով ծածկված։ Ամեն մի քայլն անելիս, ամեն ոսկոր ղարհուրելի ձայն էր տալիս.

— Ո՞ւր ես գնում, խենթ տղա։

— Ո՞ւր ես գնում, հիմար տղա։

— Մահն է կանգնած քո առաջ։

— Դարձի՛ր, դարձի՛ր, վախիր շուտով...

Ու այսպես ահարկու կանչում էին ամեն կողմից։ Ձին վախեցած ծառս էր լինում, կրծում էր սանձը երկաթե ու դողդոմ ողջ մարմնով, բայց Արին կանգ չէր առնում, ետ չէր նայում։

— Գնա՛, գնա՛, իմ Կապույտ,— ասում էր նա ձիուն ու ասպանդակում։

Ձին նորից առաջ էր վազում, և ոսկորները կանչում էին էլի.

— Ո՞ւր ես գնում, անխելք տղա։

— Վա՛յ քեզ, խենթ տղա։

— Վերադարձի՛ր, հիմար տղա։

— Քառսուն գլխանի Սպիտակ Դևի հողն է սա...

Ու այսպես կանչում էին շարունակ, բայց տղան չէր լսում նրանց, իր Կապույտը քշում էր, հա քշում։

Քշեց այսպես ու գնաց. դեմը ելավ մի սպիտակ ամրոց։

Ի՞նչ ամրոց, ի՞նչ ապարանք՝ ամբողջը մարդու սպիտակ ոսկորներից ու գանգերից շինած։

Գնաց կանգնեց Արին ամրոցի դեմ։

Այստեղ էլ մի աղջիկ եկավ նրա առաջ՝ ոսկի մազերն արձակ, դեմքը դարնան վարդ, ամեն աչքը՝ արևի հատ։

Նկավ աղջիկն ու՝

— Վա՛յ քեզ, խեղճ տղա,— ասավ,— մի՞թե դու այնքան ոսկորը չտեսար։ Գնա եկած ճամփադ, փախիր շուտով, քանի Սպիտակ Դևը չի զարթնել քնից։

— Ա՛խ, փերի քույրիկ,— ասավ Արին,— դեռ մի պատիվդ չառած, հացիդ պատառը չկերած, դասը չիրուխդ չքաշած, ինձ վախեցնո՞ւմ ես Սպիտակ Դևով։

— Ինչպե՞ս չվախենաս,— ասավ,— անահ տղա, տե՛ս, ամբողջ երկիրը ծածկվել է նրա կնրած մարդկանց ոսկորներով։ Տե՛ս, պալատ է շինել մարդկանց գանգերից։

— Բայց ինչո՞ւ է քեզ թողել կենդանի,— ասավ Արին աղջկան։

— Օ՜, այ տղա, ես նրա գերին եմ,— ասավ աղջիկը տրտում։— Նա ջնջեց, սրբեց մեր երկիրը, կերավ ծնողներիս ու քույրերիս և ինձ բերեց իրեն գերի... Բայց դու գնա՛, խեղճ տղա, թե չէ, հիմի որտեղ որ է կզարթնի նա... քառսուն գլուխ ունի, քառսուն բերան։

— Ո՛ւր գնամ,— ասավ Արին,— ես հենց նրա համար եմ եկել։ Գնա զարթնցրու, թո՛ղ գա կռվինք։

Այստեղ ոսկորները լեզու առան նորից.

— Վա՛յ քեզ, տղա, վա՛յ քու օրին, արևին... Փախի՛ր քանի շուտ է, փախի՛ր, քանի չի զարթնել...

Շատ կանչեցին այսպես, բայց Արին էլի չշարժվեց տեղից, դեռ մի քիչ էլ առաջ գնաց ու ներս մտավ։

Գնաց տեսավ քառսուն ունկանի մի կաթսա, քառսուն լիդր բրինձ մեջը. փլավ են եփել, քառսուն հավ էլ վրան դրել։

Երեք օր Արին հաց չէր կերել. փլավը տեսավ, բերանի ջուրը գնաց։ Առավ կերավ ինչքան կարաց, բերանը սրբեց ու մի կողմ նստեց։

Դևը զարթնեց, եկավ ներքև։

— Մարդու հոտ եմ առնում,— ասավ,— ո՞վ կա այստեղ։

Մինչ վախեցած կինը կպատասխաներ, դուրս եկավ Արին կողքի սենյակից։

— Ես եմ,— ասավ։

— Ո՞վ ես դու — զարմացավ Դևը։ — Հավքն իր թևով, օձն իր պորտով չի գալիս այստեղ, դու ինչպե՞ս համարձակվեցիր...

— Սկել եմ,— ասավ Արին,— քու դեմ կռիվ։

Դևը հասկացավ, որ դա իր երկիրը գալուց առաջ սպանել էր իր Կարմիր ու Սև եղբայրներին և հիմա եկել է իր մոտ։

— Լա՛վ,— ասավ,— կռիվ կուզես՝ կռիվ անենք։ Արի դեռ մի հաց ուտենք, հետո կռվենք։

Նստեցին հացի։ Արին կուշտ էր, բան չկերավ, իսկ Դևը քառասուն լիդր փլավը առաջը դրեց, ամեն լիդրը մի բերանը կոխեց մի հավի հետ ու վեր կացավ։

Վեր կացավ ու ձեռն առավ իր դուրզը, որ քառասուն լիդր էր կշռում։

— Դե, պնա՛ր,— ասավ։

Արին էլ առավ իր Դուրզը, եկավ նստեց իր Կապույտին ու դուրս եկան հրապարակ։

Նորից դիտնի տակից ու երեսից զարհուրելի ձայներ.

— Վա՛յ քեզ, խեղճ տղա։

— Վա՛յ քու օրին, արևին։

Խոսողն էլի ոսկորներն էին։

— Հերթը հիմի ի՞մն է, թե քունը,— ասավ Դևը։

— Քոնն է,— ասավ Արին,— ես քո հյուրն եմ։

Դևը գնաց քառասուն-քառասուն քայլ հեռու։

— Դե, պատրաստ կաց,— ասավ,— գուրզը եկավ։

Ու գուրզը գցեց մի ահագին ժայռի նման։

Արին, որքան ուժ ուներ, մտրակեց ձիուն։

Ձին թռավ վերև, գուրզը անցավ նրանց տակից։

Դևը մին էլ գնաց, մին էլ եկավ։

Այս անգամ էլ ձին թռավ վերև։

Դևը կատաղեց ու գնաց ավելի հեռու ու երրորդ անգամ գուրզը գցեց։

Այս անգամ էլ Արին, որքան ուժ ուներ, մտրակեց ձիուն։

Կապույտը նորից մի րոպե հետ թռավ վերև, և գուրզը նորից անցավ նրանց տակից։

— Դե, հերթը իմն է,— ասավ Արին,— կանգնիր հիմա։

Դևը կատաղությունից չէր կարողանում ուղիղ կանգնել։ Երկար մռնչաց, տնքաց, քառատուն բերնից ծուխ ու մուխ արձակեց և ապա կանգնեց Մասիս սարի պես սպիտակ։ Մասիս սարի պես մեծ, ահագին։

Գնաց Արին մի քիչ հեռու ու ձին քշեց՝ թուրը հանած։ Եկավ թափով զարկեց ու դևի երևսունինը գլուխը միանգամից ցած բերեց։

Բայց քիչ հետո այդ գլուխները դուրս եկան նորից։

Զարմացավ տղան ու թուրը քաշեց կրկին։ Ու նորից երեսունինը գլուխը կտրեց միանգամից։

Բայց Դևը կենդանի էր դեռ, և գլուխները դուրս եկան կրկին։

— Այս ի՞նչ բան է,— զարմացավ Արին,— մի՞թե անմեռ է սա։

Այստեղ աղջիկը կանչեց ամրոցից։

— Մի՛ վախիր, Արի. մեջտեղի գլխին զարկիր, ու որքան էլ Դևը խնդրի, չկրկնես երկրորդ անգամ։

Ասավ թե չէ, թուրը քաշեց երրորդ անգամ ու մի զարկով մեջտեղի գլուխը թռցրեց։

— Զարկիր. մե՛կ էլ, մե՛կ էլ,— կանչեց Դևը գալարվելով։

— Ես իմ մորից մեկ եմ ծնվել,— ասաց Արին ու, թուրը սրբելով, գնաց պալատ։

Աղջիկն այստեղ փաթաթվեց տղայի վզով, համբուրեց նրան ու շնորհակալ եղավ։

— Դե հիմի,— ասավ,— ես քոնն եմ, դու իմը։

—Այո, դու իմը կլինես, երբ հասնեմ նպատակիս,— ասավ Արին։

Ու դրանից հետո երեք օր մնաց այդտեղ, հանգստացավ ու քեֆ արավ։

Մի օր էլ քեֆի ժամանակ «ախ» քաշեց ու վեր կացավ։

— Ես գնում եմ,— ասավ։

— Ո՞ւր,— հարցրեց կինը զարմացած։

— Բա,— ասավ,— մեր այգին այնտեղ մնացել է չոր, ես այստեղ նստեմ քե՞ֆ անեմ։ Պե՛տք է գնամ։

— Ո՞ւր,— հարցրեց կինը։

— Հաղարան Բլբուլը բերելու։

— Վա՛յ,— ասավ,— հողն իմ գլխին։ Այնտեղ գնացողը ետ չի գալիս։

— Չէ՛,— ասավ Արին,— ինչ էլ լինի, պետք է գնամ։ Ես ուխտ ունեմ, պետք է կատարեմ։ Պետք է Հաղարան Բլբուլը բերեմ, որ մեր այգին կանաչի նորից...

Կինը տեսավ, որ մարդու միտքը չի կարող փոխել, նրան չի կարող պահել, նստեց խորհուրդ տվեց, թե ինչպես պետք է բերել Բլբուլը Հաղարան։

Ու Արին ճամփա ընկավ դեպի Սիպտակ թագավորի երկիրը։

6

Գնա՜ց, գնաց, շատն ու քիչը ինքը պիտի ու իր ձին, գնաց հասավ Սիպտակ երկրի սահմանը։ Հասավ թե չէ, երկու սիպտակ շուն, շուն մի ասիլ, երկու կատաղած գաղան, եկան մեր ձիավորի վրա պրծան։

Գցեց Արին ամենքին մի գաթա. դրանք գաթով եղան, ինքը գնաց իր ճամփան։

Գնաց հասավ Սիպտակ թագավորի ամրոցը։

Ի՞նչ ամրոց, ի՞նչ ապարանք... գնա՛, գնա՛, թե պիտի վերջանա։ Հազար մուտք ուներ, հազար անցք։

Գնաց մտավ Արին ներս ու, ինչպես կինն էր ասել, բոլոր փակ դռները բաց արավ, բաց դռները փակեց։

Հետո տեսավ մի սենյակում գայլ՝ խոտն առաջին և մի ղոչ՝ միսն առաջին։

Երկուսն էլ սովից մաշվել, ոսկոր էին դարձել։

Միսը վերցրեց Արին գայլի առաջ դրեց, խոտը՝ ղոչի

Մի քիչ գնաց՝ անբոց, հառաչանք ու լաց լսեց։

Մոտեցավ, հազար ձայնով, հազար ձևով մարդիկ էին լալիս փակ դռների ետև, այնպես տխուր ու զարհուր, որ Արին էլ չհամբերեց, ոտով զարկեց, փակ դուռը պոկեց։

Դուրս թափվեցին կմախք դարձած անթիվ, անթիվ գերիներ։

Դուրս թափվեցին ուրախության ճիչերով, օրհնանքներով։

Դուրս թափվեցին ու ցրվեցին...

Գնաց քիչ էլ մեր Արին, հանդիպեց Սիպտակ թագավորին։ Փղոսկրից ու ոսկուց շինած մեծ սրահում պառկել էր նա երկար ու մեկ և խոմփում էր զարհուրելի. շունչը դուրս էր գալիս ծխի պես, և նրա շնչից դողում էր ամեն ինչ։

Գնաց Արին ու կանգնեց նրա գլխավերև։

Նայեց, նայեց, ուզեց պարկել... Բայց տմարդը միայն քնած մարդուն կղարկի։

— Թող ինի իր համար,— ասավ ու ինքը կռացավ, բանալին հանեց նրա մլրուքի միջից։

Հանեց ու գնաց։ Գնաց վերջին սենյակի դուռը բաց արավ։ Դուռը բաց արավ ու ի՞նչ տեսավ... Մի թռչուն՝ փետուրները հազար գույնի, թևերը զառ-աբրեշում՝ ցոլք են տալիս ադամանդի ու զմրուխտի փայլով, և այդ ցոլքերից ու գույներից ծիածաններ են վառվում սենյակում։

Դա ինքը՝ Բլբուլն էր Հաղարան...

Ուրախությունից Արին տարվեց նրա փայլուն տեսքով, բայց էլի ուշքի եկավ շուտով և իսկույն Բլբուլն առավ իր վանդակով ու դուրս։

Ու ոնը դուրս գրեց թե չէ՝ օդը լցվեց ձայներով.

— Տարա՞ն, տարա՞ն...

— Տարան մեր Բլբուլը Հաղարան։

— Բռնեցե՛ք, բռնեցե՛ք։

— Բաց դռներ, բռնեցե՛ք։

— Ինչո՞ւ ենք բռնում, ինչո՞ւ ենք բռնում,— պատասխանեցին բաց դռները։— Մեռանք փակած մնալով, հազիվ մեզ բաց արավ։ Թո՛ղ գնա, արևը պայծառ։

— Փակ դռներ, բռնեցե՛ք։

— Չե՛նք բռնի, չե՛նք բռնի,— պատասխանեցին փակ դռները։— Մեռա՛նք կրնկի վրա կանգնած, հազիվ դրեց մեր տեղը։ Թող գնա, կյանքն ուրախ...

— Գերիներ, բռնեցե՛ք, բռնեցե՛ք։

— Չե՛նք բռնի, չե՛նք բռնի, մեր ազատողին չենք բռնի,—

ասին գերինները միասին։— Թո՛ղ գնա, ճամփան ծալիկ ու մանուշակ...

— Գել, բռնի՛ր, բռնի՛ր։

— Ինչո՞ւ եմ բռնում,— ասավ գելը,— մեռա սուված մնալով, հազիվ եկավ միսը դրավ առաջս։ Թո՛ղ գնա, թեթև լինի իր ճամփան։

— Ղոչ բռնի՛ր, բռնի՛ր։

— Ինչո՞ւ եմ բռնում,— ասավ ղոչը,— մեռա սուված մընալով, հազիվ եկավ խոտը դրավ առաջս։ Թող գնա, երկա՛ր արև...

— Բռնեցե՛ք, բռնեցե՛ք,— կանչում էին ձայները նորից։ Բայց ոչ ոք չելավ բռնելու։

Դուրս եկավ Արին ամրոցից, հեծավ իր ձին ու գնաց։

Նրա ետևից հազար ձայներ ճչում էին ու կանչում էլի, բայց Արին, կնոջ խրատը հիշելով, բուրդ խրից ականջները ու գնաց... և մինչև սահմանը ետ չնայեց երբեք։

7

Բլբուլն առած գնաց Արին, գնաց հասավ կնոջ մոտ։

Ուրախանա՛ք, ինչպես նրա կինն ուրախացավ։ Փաթաթվեց մարդուն, համբուրեց, տխուր սիրտը բաց եղավ, որ մարդը վերադարձել էր փորձանքներից ազատ։ Նա է՛լ ավելի ուրախացավ, երբ տեսավ մարդը հասել է իր նպատակին՝ բերել է Բլբուլը Հազարան։

— Դե, Բլբուլ ջան,— ասավ Արին,— խոսիր, որ այս չոր սարերը կանաչեն։

Բլբուլը բերանը բաց արավ թե չէ՝ Սիպտակ Դևի չոր, ավերակ աշխարհը կանաչեց ու կանաչների միջից նրա կերած մարդկանց ոսկորները ձայն տվին.

— Օրհնյա՛լ լինես, կորիճ տղա. մենք հանգիստ ենք հիմա։

— Դե՛,— ասավ Արին կնկան,— պատրաստվիր գնանք։ Մեր չոր այգին սպասում է այս Բլբուլին Հազարան։

Եվ մարդ ու կին վեր կացան, Դևի անգին բաները հավաքեցին, ուղտերին բարձեցին, իրենք էլ ձիեր նստեցին ու— զրը՛նգ, հա զրը՛նգ, զրը՛նգ, հա զրը՛նգ—ճամփա ընկան դեպի Սև Դևի երկիրը։

Այստեղ էլ բլբուլը խոսեց, Սև Դևի ավերակ աշխարհը կանաչեց, իսկ իրենք միջնեկ եղբոր հարսին վերցրին, Դևի թանկ բաները նոր ուղտերի բարձեցին ու նորից—զրը՛նգ, հա զրը՛նգ, զրը՛նգ, հա զրը՛նգ—գնացին հասան կարմիր Դևի հողը։

Այստեղ էլ վերցրին մնծ եղբոր հարսին, վերցրին Դևի անգին բաները և նորից ճամփա...

Գնացի՛ն, գնացին հասան այն տեղը, ուր եղբայրները բաժանվել էին իրարից։

Երեք ճամփի մեջտեղը նստած էր էլի առաջվա ծերունին։

— Բարի աջողո՛ւմ, պապի,— ասավ Արին։

— Բարո՛վ, հաղա՛ր բարի, կորիճ տղա,— ճանաչեց ծերունին նրան։

— Պապի, եղբայրներս չե՞ն անցել այս կողմից,— հարցրեց Արին։

— Չէ՛,— ասավ ծերունին։— Այստեղից դեռ մարդ չի անցել։

— Դե որ այդպես է,— ասավ Արին,— այս հարսներին մոխիկ արա, ես գնամ եղբայրներիս հետից։

— Շա՛տ լավ,— ասավ ծերունին,— իմ գործն է մոխիկ անել...

Եվ Արին մնաս բարով արավ բոլորին ու ճամփա ընկավ։

Գնաց, շատ քաղաքներ ման եկավ՝ եղբայրներին չգտավ։

Վերջը հասավ Խորասան։ Գնաց մեկի տուն հյուր ընկավ։

— Ձեր քաղաքում զարիբ մարդուն ո՞նց են գտնում,— հարցրեց։

— Դա հեշտ բան է,— ասավ տանտերը։— Մենք զարիբների ժամ ունենք։ Եթե զարիբ ունես, առավոտը կերթաս մի երկու եզ կմորթես-կեփես, հետո ժամի զանգերը կքաշես։ Քաղաքում ինչքա՛ն զարիբ-պանդուխտ կա, կիմանան, որ իրենց ժամում պատարագ է, մատաղ կա, կթափվեն կգան։ Թե քու

ղարիբներին գտնես,— ասավ տանտերը,— այնտեղ կգտնես։

Մյուս օրը Արին դիշերով գնաց յոթ եղն առավ, մորթել տվեց, եփել տվեց ու առավոտը վաղ ժամի դանգերը քաշեց։

Զանգերի ձայնը լսելով ինչքա՛ն ղարիբ կար Խորասան՝ հավաքվեցին եկան ժամ։ Արին իրա ձեռքով մատաղ բաժանեց։ Եկան անցան հարյուր հազար ղարիբ... եղբայրները չկային։

Վերջը, մատաղը հատնելու վրա էր, միջնեկ եղբայրը երևվաց։ Տեսավ, կանչեց իր մոտ, մատաղ տվեց, գինի տվեց ու հարցրեց։

— Ճանաչում ես՝ ո՞վ եմ ես։

— Չէ,— ասավ,— ի՞նչ իմանամ ո՛վ ես։

— Իսկ դու ո՞րտեղ ես ծառայում,— հարցրեց Արին եղբորը։

— Ես,— ասավ,— բաղնիսում մոխիր թափող եմ։

Արին վերցրեց սրան ու նկավ բաղնիսի սիրտը մոտ։

— Սրա վարձր ասր,— ասավ,— ես սրան տանում եմ։

— Սա քո ի՞նչն է, որ տանում ես,— հարցրեց բաղնիսի տերը։

— Իմ եղբայրն է,— ասավ Արին։

— Դու ո՞վ ես, որ իմ եղբայրն ես,— հարցրեց միջնեկը՝ Զարին։

— Ես Արին եմ,— ասավ։

Զարին չհավատաց։

— Թե իմ եղբայրն ես,— ասավ,— դե ասա տեսնեմ, մենք ինչո՞ւ համար ենք դուրս նկել մեր երկրից։

— Ձաղարան Բլբուլի համար,— ասավ Արին։— Արդեն բերել եմ։

— Ո՞ւր է հապա։— հարցրեց Զարին։

Արին թե՝ «Մեր բաժանման տեղումն է, ծերունու մոտ»։

Այստեղ եղբայրները ճանաչեցին իրար։ Բարև տվին, բարև առան, ինչպես կարգն է։

Արին Զարու հին շորերը հանել տվեց, դեն գցեց, նոր շորեր հագցրեց, ու ճամփա ընկան։

Գնացին այսպես մեծ եղբորն էլ գտան ու երեքով, ձիեր հեծան, եկան հասան երեք ճամփի զլուխը։

Նկան տեսան հարսներն այստեղ։

Արին եղբայրներին ցույց տվեց Հազարան Բլբուլը և հետո ամեն մեկին տվեց իր նշանածը։

Բայց մեծ եղբայրը՝ Խարին, դժգոհ մնաց։

«Տե՛ս,— ասավ մտքում,— ամենից գեղեցիկն ինքն է վերցնում, մեզ ի՞նչ է տալիս»։

Մի քիչ հանգստացան այստեղ, հաց կերան, հետո վեր կացան շնորհակալություն արին ծնունդն, նոր քարվան կապկին ու—պրը՛նդ, հա պրը՛նդ, պրը՛նդ, հա պրը՛նդ— ճամփա ընկան դեպի իրենց աշխարհը։

8

Այս աշխարհում ի՞նչն է հաստատ, ի՞նչն է ուժեղ... Սեր, ընկեր, եղբայր— ո՞րն է հաստատ։

Իմաստուն էլ լիներս՝ չես կարող պատասխանել։

Այսպես շարքով, քարվան կապած գնացին եղբայրները, գնացին հասան մի ծովի։ Պարզ ջրերը փրփուր կապած զարկվում են ափերին։ Ջարկվում են ու խշխշում, խշխշում են ու հանդարտ-հանդարտ նա գնում։

Ջուլալ ջրեր, հոգնած մարդիկ ու շոգ օր։

— Եկեք լողանանք,— ասավ մեծ եղբայրը։

— Լողանա՛նք,— ասին Ջարին ու Արին։

— Թող հարսները առաջ գնան,— ասավ մեծ եղբայրը,— մենք լողանանք, հետո կհասնենք նրանց։

Հարսները, Բլբուլն առած, քարվանի հետ առաջ գնացին. եղբայրները հանվեցին ու մտան ջուրը։

Ծովի ջուրը փրփուր կապած հանդարտ-հանդարտ զարկվում է ափերին, և եղբայրները չրփ-չրփ լողանում են միասին։ Մին էլ մեծ եղբայրը միջնեկին.

— Լսի՛ր,— ասավ,— արի սրան խեղդենք, Բլբուլը մենք տանենք։

— Չէ,— ասավ Չարին,— ի՛նչ էլ լինի մեր եղբայրն է, մի՛ղք է։ Լավ է ձեռն ու ոտը կապենք, աչքերը հանենք, թող մնա։

— Այդ լավ ասիր,— ասավ մեծ եղբայրը՝ Խարին։

Ու ջրից դուրս եկան թե չէ, երկուսով բռնեցին եղբորը, ձեռներն ու ոտները կապեցին, դրին գետին, աչքերը հանեցին, թողին այդտեղ՝ ծովի ափին, շորերը ծովն ածին ու իրանք գնացին։

Գնացին հասան քարվանին։

Հարսները, տեսան երկուսով են, հարցրին.

— Բա ո՞ւր մնաց Արին։

— Արի՞ն...— ասավ մեծ եղբայրը տխուր։— Երանի՛կ չլողանայինք. սատանի ոտը կոտրվեր՝ ջուրը չմտնեինք։ Արին խեղդվեց ծովում...

— Ի՛նչ էլ արինր, հանել չկարողացանք,— ասավ միջնեկը արտում։

Հարսներն այսպես «վա՛յ» արին ու լաց եղան։

Ու ամենից ավելի իրա՝ Արիի կինը։

Վերջը, երբ եղբայրները մխիթարեցին նրանց, հանգըստացան, կանգնած քարվանը նորից—ղրը՛նգ, հա ղրը՛նգ— շարունակեց ճամփան։

Նրանք դեռ ճանապարհի կիսին էին՝ լուրը հասավ թագավորին, թե որդիներդ գալիս են ու բերում են Բլբուլը Հազարան։

Թագավորը, ինչպես կարդն է, իր մեծամեծներով, վինավառ ղորքով ու մեծ ժողովրդով գնաց առաջ։

Երկու կողմից ղրընգոցով, շիկշիկոցով եկան, հանդիպեցին իրար։ Պատիվ տվին, պատիվ առան ու հանդեսով, երգով, կանչով մտան քաղաք։

Քաղաքումն էլ մարդ չմնաց, հարյուր տարվա ձերերն էլ ոտքի ելան Հազարան Բլբուլը տեսնելու։

Կատուր, փողոց լցվեց մարդով, և բոլորը ծափ զարկեցին ու կանչեցին.

— Կեցցե՛ քաջն Խարին։

— Կեցցե՛ քաջն Չարին։

— Կեցցե՛ Բլբուլը Հազարան։

Այսպես երդով, կանչով զորք ու ժողովուրդ, ինչպես վարար մի գետ, գնացին առաջ։

Բլբուլն իր վանդակով դրին սեղանին։

Այստեղ միայն թագավորը հարցրեց որդիներին, թե հապա ո՞ւր է Արին։

— Նա ծովում խեղդվեց, հայրիկ,— ասին եղբայրները տխուր։

— Իսկ այս երեք աղջիկն ո՞վ են,— հարցրեց թագավորը նորից։

— Այս մեկը,— պատասխանեց մեծ եղբայրը՝ Խարին,— իմ նշանածն է, այն մյուսը՝ միջնեկ եղբորս, իսկ սա էլ, ցույց տվեց Արիի կնկան, աղախին է քեզ համար...

— Սո՛ւտ է,— ասավ փոքր հարսը թագավորին։

Թագավորն այստեղ մատը կծեց։

— Իսկ Հազարան Բլբուլը ձեզնից ո՞րը գտավ։

— Ե՛ս,— ասավ մեծը՝ Խարին։

— Ե՛ս,— վրա բերեց միջնեկը՝ Զարին։

Թագավորը նորից մատը կծեց։

— Ինչպես տեսնում եմ,— ասավ,— ձեր մեջ վեճ կա։ Դե, միևնույն է,— ասավ,— ով բերել է, թող նա էլ խոսեցնի Բլբուլը։

— Ե՛ս,— առաջ նկավ մեծը՝ Խարին։

— Դե խոսեցրու,— ասավ թագավորը։— Խոսեցրու, թող յոթ տարվան մեր չոր այգին կանաչի նորից։

Խարին բարձրացավ սեղան։

Զորք ու ժողովուրդ այստեղ նորից իրար անցան, ծափ զարկեցին ու կանչեցին.

— Կեցցե՛ Խարին, կեցցե՛ Խարին...

— Կեցցե՛ Բլբուլը Հազարան...

Խարին մոտեցավ Բլբուլին, գլուխ տվեց, ինչպես կարգն է, ու ասավ.

— Բլբուլ, խոսի՛ր, թող մեր այգին կանաչի նորից։

Բլբուլը գլուխը թափ տվեց տխուր ու ձայն չհանեց։

Առաջ նկավ միջնեկ որդին՝ Զարին։

— Տեսա՞ր, հայրիկ,— ասավ,— տեսա՞ր, որ ես եմ բերել։

— Դե, խոսեցրու,— ասավ հայրը,— խոսեցրու, թող յոթ տարվա մեր չոր այգին կանաչի նորից։

Եվ Ջարին բարձրացավ սեղան։

Ջորք ու ժողովուրդ էլի իրար անցան, ծափ զարկեցին ու կանչեցին.

— Կեցցե՛ Ջարին, կեցցե՛ Ջարին։

— Կեցցե՛ Բլբուլը Հազարան։

Ջարին մոտեցավ Բլբուլին, գլուխ տվեց, ինչպես կարգն է ու ասավ.

— Բլբուլ, խոսի՛ր, թող մեր այգին կանաչի նորից։

Բլբուլն էլի տխուր թափ տվեց գլուխը ու ձայն չհանեց։

Ծափ ու ծիծաղ դադարեց։

Բոլորն ընկան մտրերի մեջ։

Այգին չոր էր, չոր էլ մնաց։

Իսկ Բլբուլը հալվում, մաշվում էր վանդակում, և նրա դրմբռուխտ ու լալ փետուրները թափվում էին օրեցօր...

Սրանք թող մնան այստեղ, մենք լուր տանք փոքր եղբորից։

10

Այն ծովը, ուր եղբայրները լողացան, ուր պարզ ջրերը փրփուր կապած զարկվում էին ափերին, այն ծովի վրայով ճերմակ հավքերի մի երամ էր անցնում։ Մի պառավ մայր էր իր ձագերի հետ։ Շարան կապած, ծովի երեսն ընկած՝ գնում էին նրանք հետու։ Գնում էին, թևին անում ու կղղում։

Գնացին այսպես հետո՛ւ, հետո՛ւ ու երբ հասան ծայրը ծովի՝ ձագերը ճչացին հանկարծ.

— Վա՛յ, մայրիկ,— ասին,— այս ո՞վ է ընկած այստեղ՝ ծովի ափին։

Պառավ մայրը, որ շատ երկրներ էր տեսել ու շատ մարդ էր ճանաչում՝

— Թագավորի փոքր տղան է,— ասավ։

— Բա ինչո՞ւ է ընկել-մնացել այստեղ։

Պառավ մայրը, որ խմաստուն էր և ամեն ինչ գիտեր, ասավ.

— Սղրայրները դրա ձեռն ու ոտը կապել են, աչքերը հանել ու թողել։

— Վա՛յ, խեղճ տղա՛, խեղճ տղա՛,— կղղացին ձագերը միասին։— Բա ո՞նց պիտի սա լավանա...

— Դա հեշտ բան է,— ասավ մայրը,— ես իմ թևից մի փետուր կգցեմ, աչքերն էլ իր կողքին են, թող տեղը դնի ու փետուրը քսի աչքերին։

— Իսկ մոկերը ո՞նց անի, մայրիկ։

— Այն էլ դուք պնացեք պոկեցնեք կացով։

Ձագերը խղճացին տղին, ցած իջան և կտուցներով սկսեցին բանդել պոկել նրա ձեռներն ու ոտները կաշկանդող թոկերը։

Երբ ձեռներն ազատվեցին կապից-կապանքից, Արին ձեռը տարավ աչքերը, գտավ, տեղը դրեց ու թռչունի փետուրը քսեց։

Ինչպես քնից զարթնես՝ աչքերը բաց արավ ու լույս աշխարհը տեսավ։ Վեր կացավ, ուզեց թռչուններին շնորհակալություն հայտնել, բայց նրանք, ճերմակ երամ կապած, ծովի վրայով լանջով գնում էին նորից...

Ու վեր կացավ Արին և մերկ ու մենակ գնաց հոր քաղաքը։ Բայց քանի որ ակլոր էր, ամոթից չուզեց գնալ պալատ։

«Լավ է,— ասավ,— ծառա մտնեմ մի տեղ, վրաս, գլխիս շոր անեմ, նոր գնամ»։

Ու գնաց մի հացթուխի մոտ։

— Բարի աջողում, վարպետ,— ասավ,— ծառա չե՞ք վերցնի։

— Ինչո՛ւ չէ,— ասավ,— հենց ջուր կրող ու-փայտ ջարդող է հարկավոր ինձ։

Ու խոսեցին, պայման կապեցին, և Արին եղավ հացթուխի ծառա։ Ջուր էր բերում, փայտ էր ջարդում, փուռ էր վառում և հացուփոր ապրում։

Անցավ այսպես մի ամիս։ Մի օր էլ հանկարծ քաղաքի մարդիկ իրար անցան և քաղաքը լցվեց ճիչ ու լացով։

Մարդիկ փախչում, պահվում էին ամեն կողմ։

— Այս ի՞նչ բան է, վարպետ,— ասավ Արին։

— Այ վա՛յ գլխիդ,— ասավ տերը,— ուխտ ականջում քնա՞ծ ես, ինչ է... Սիպտակ Թագավորը հրե՛ իր բոլոր դևերին հավաքել եկել է մեր քաղաքը պատռել։

— Ինչո՞ւ համար,— ասավ,— վարպետ։

— Ինչո՞ւ համար... քո՛ւ դնչի համար, հիմա՛ր... Թագավորի տղաները դնացել են նրա Հազարան Բլբուլը բերել, նա էլ հիմա եկել Բլբուլ բերողին է ուզում։

— Հա՞... դե որ այդպես է, վարպետ,— ասավ,— արի դնա Թագավորի լավ ձիերից մինը խնդրի, գնամ պատասխան տամ...

Վարպետը ծիծաղեց։

— Այ վա՛յ բիզ,— ասավ,— Սիպտակ Թագավորին պատասխան ովոդին անես։ Պատասխան՝ Թագավորի տղաները կարո՛ղ են նրան պատասխան տալ. դու ո՞վ ես, տկլոր հիմար։

Ասավ վարպետն ու դուրս գնաց։

Նրա հետից էլ Արին։

Գնաց տեսավ Թագավորի մեծ տղան, իր մեծ եղբայրը՝ Խարին, ձի նստած գնում է Դևին պատասխան տալու։

— Այդ ո՞ւր, Թագավորի տղա,— ասավ Արին։

— Հեռո՛ւ,— ասավ,— տկլոր հիմար. չե՞ս տեսնում, Սիպտակ Թագավորն եկել, Հազարան Բլբուլ բերողին է ուզում...

Ասավ, մարակով զարկեց Արուն ու ձին քշեց-գնաց։

11

Գնաց, գնա՛ց դուրս եկավ քաղաքից։

Դուրս եկավ ու ի՞նչ տեսավ... Ամբողջ դաշտը ճեփ-ճերմակել է Սիպտակ Թագավորի սիպտակ վրաններից, սիպտակ

զորքերից ու սիպտակ ձիերից։ Ու ամեն կողմ աղմուկ, դևերի քրքիջ, ձիերի խրխինջ։

Այդ որ տեսավ, ահ առավ սիրտը, թեքեց իսկույն ձիու գլուխը ու նորից ետ եկավ քաղաք, ձին թողեց, որ գնա պալատ, իսկ ինքը պահվեց անհայտ մի տեղ։

— Վա՜յ, կորավ մեր խարին,— ասավ թագավորը, տեսնելով նրա ձին անտեր։— Դե, Ջարի, հերթը քոնն է հիմի՝ Սիպտակ թագավորին պատասխան տալու։ Թե դու ես բերել Բլբուլը Հազարան, դու էլ կարող ես պատասխան տալ նրան...

Ջարին իսկույն ղրահ հագավ, զինվեր առավ ու ձի հեծավ։ Ճամփին Արին մոտեցավ նրան։

— Այդ ո՞ւր, թագավորի տղա,— ասավ։

— Հեռո՛ւ, հիմար անասուն։ Չե՞ս իմացել, որ Սիպտակ թագավորը Հազարան Բլբուլ բերողին է ուզում։ Գնում եմ պատասխան տամ։ Հեռո՛ւ...

Ասավ, քաշեց մտրակը նրա թիկունքովը մեկ ու ձին քշեց-գնաց։

Գնաց ելավ դաշտ, դաշտը ելավ ու ի՞նչ տեսավ։— Ամբողջ դաշտը ճերմակել է ձյունի պես Սիպտակ թագավորի սիպտակ վրաններից, սիպտակ զորքերից ու սիպտակ ձիերից։ Ու ամեն կողմ խոսոց ու աղմուկ, դևերի քրքիջ, ձիերի խրխինջ։

Ջարին սառավ տեղում։

Ահից-երկյուղից կապ ընկավ լեզուն, ձիու գլուխը թեքեց իսկույն ու նորից ետ՝ դեպի քաղաք։ Ձին թողեց գնա պալատ, իսկ ինքն ամոթից պահվեց մի տեղ։

Մինչ Սիպտակ թագավորն սպասեց, տեսավ մարդ չի երևում, նորից ուղարկեց մի նոր հրամանաւ

«Վերջին անգամ ու կտրական պահանջում եմ տալ ինձ իմ Բլբուլը բերողին։ Հակառակին՝ շունչ չեմ թողնի այս երկրում, քար չեմ թողնի քարի վրա»։

Սուգ ու շիվանն ընկավ քաղաք։

Նորից վախ ու փախ։

Նորից փախուստ ու պահուստ։

— Վա՜յ, մենք կորանք։

— Վա՛յ, մենք մեռանք։

— Ո՛չ չքանար այդ բլբուլը։

— Չըմե՛ր, կորչե՛ր այդ բլբուլը։

Այդ ժամանակ Արին փոի համար փայտ էր ջարդում ու ջարդի ձայնից բան չէր լսում, բայց մեկ էլ տեսավ վարպետն եկավ վազելով և ուզում է փուռը մտնի։

Արին այստեղ ծիծաղեց։

— Ի՞նչ ես անում, վարպետ,— ասավ։

— Ձայնդ կտրի՛, շաշ ավարա,— գոռաց վարպետն ահաբեկ։— Սիպտակ թագավորը գալու է հիմի, քարը քարին չպիտի թողնի։ Դու այստեղ նստել փա՛յտ ես ջարդում։

— Սիպտակ թագավո՞րը... Բա թագավորի տղաները պատասխան չտվի՞ն։

— Ի՞նչ պատասխան, ի՞նչ բան, հիմար. պիտի ճարը տես, հիմա...

— Այդ չեղա՞վ, վարպետ,— ասավ Արին։— Արի գնա թագավորին ասա՝ ինձ մի ձի տա, գնամ պատասխան տամ։

— Գնա՛, կորի, անճար հիմա՛ր,— ասավ վարպետը փոի միջից։— Թագավորի տղաները չկարացին բան ասել, դո՞ւ պիտի պատասխան տաս...

Այդ ժամանակ սուգ ու շիվանը ավելի մեծացավ քաղաքում։ Մարդիկ իրար տրորելով փախչում էին ու անիծում թե Հազարան Բլբուլին, թե նրա բերողին։

Այդ որ լսեց Արին, էլ չհամբերեց, մերկ ու տկլոր գնաց ուղիղ թագավորի մոտ։

Գնաց գլուխ ավեց, ինչպես կարգն է, ու կանգնեց։

— Թագավորն ապրած կենա,— ասավ,— հրամանք արա՝ մի ձի տան ինձ, որ գնամ պատասխան տամ Սիպտակ թագավորին։

Մեր թագավորը չճանաչեց իր փոքր որդուն։

— Դե՛,— ասավ,— ես հույս չունեմ, թե մի բան անես, բայց գնա գոմը, ո՛ր ձին կուզես ընտրի ու, թե կարաս, պատասխան տուր Սիպտակ թագավորին։

— Բայց, թագավորն ապրած կենա,— ասավ Արին,— ես մի պայման եմ դնում։

— Ասա՛, քաջ տղա։

— Եթե ես,— ասավ Արին,— Սիպտակ թագավորին պատասխան տամ, ու նա թողնի գնա առանց մեր քաղաքը վնասելու, երեք օր թագավորությունդ ինձ տուր, որ ի՛նչ ուզեմ, անեմ, որ ի՛նչ դատեմ՝ դատեմ։

Թագավորն այստեղ պայման դրեց ու ձեռ դրեց։

Արին պայմանն առավ ծոցը դրեց, նետ-աղեղը վերցրեց, ձին հեծավ ու գնաց։

Գնաց ուղիղ Սիպտակ թագավորի մոտ։

Գնաց տեսավ նրա բանակում մեծ կերուխում, դևերի քըրքիջ, ձիերի խրխինջ։

— Ո՞ւր է թագավորն,— ասավ։

— Հրե՛ իրա սիպտակ վրանում։

Քշեց գնաց սիպտակ վրան։ Ներս մտավ ու, առանց գլուխ տալու, կանգնեց Սիպտակ թագավորի առաջ։

Սիպտակ թագավորը բարկացավ վրան։

— Ինչա՞ւ,— ասավ,— գլուխ չես խոնարհում ինձ։

— Ես գլուխ խոնարհել չգիտեմ,— ասավ Արին։

— Դե լա՛վ,— ասավ զայրացած,— դո՛ւ ես թագավորի փոքր տղան։

— Ե՛ս եմ։

— Դո՞ւ ես բերել իմ Բլբուլը Հազարան։

— Ես եմ բերել։

— Պատմիր, տեսնեմ, ինչպե՞ս բերիր։

Արին պատմեց՝ այսպես-այսպես...

Պատմեց ինչ եղել էր, պատմեց այն բոլորը, ինչ ես պատմեցի ձեզ։

— Դե, ինչպես բերել ես,— ասավ Սիպտակ թագավորը բարկացած,— այնպես էլ գնա ու բեր քո ձեռքով։ Թե չէ հող ու մոխիր կշինեմ ձեզ։

Արին ծիծաղեց։

— Հա՛-հա՛-հա՛... Ո՞նց թե՝ «բեր»,— ասավ։— Ետ չեմ տա ես Բլբուլը Հազարան։ Կոխվ կուզես, կոխվ անենք։

Թագավորները ծիծաղ չեն սիրում։

Այդ ծիծաղից մոնչաց Սիպտակ թագավորը, բերնից ծուխ

ու կրակ արձակեց, ուզեց բերանի հուրքով վառել նրան, բայց Արին նետը դրեց աղեղին։

Լարեց աղեղն ու թողեց։

Վը՛զզ, անցավ նետը։

Սիպտակ թագավորը գոռաց ահռելի ու թավալվեց իր վրանում։

Նրա ձայնից բոլոր անցան բոլոր գևերը՝ մեծ ու փոքր, և ո՛րը ոտով, ո՛րը ձիով փախուստ տվին ու գնացին։

Գնացին նորից Ջոր-Ջորստան, Անդ-Անապատ, ուր քարվան չի քոչում, ուր հավք չի թռչում։

12

Լուրը բերին Թագավորին։ Թագավորը նորից երգեցիկ խըմբով, դինավառ վորքով ու մեծ ժողովրդով գնաց առաջ։

Եկան, երկու կողմից հանդիպեցին իրար, պատիվ տվին, պատիվ առան։ Փող հնչեցին, ծափ զարկեցին ու կանչեցին.

— Կեցցե՛, կեցցե՛...

— Կեցցե՛ մեր քաջը...

Արին այստեղ մոտեցավ հորը։

— Ինձ ճանաչո՞ւմ ես, հայրիկ,— հարցրեց։

— Չէ՛,— ասավ Թագավորը։— Չեմ ճանաչում։

— Ես քո Արին եմ,— ասավ տղան։

Թագավորը չհավատաց.

— Դե, որ դու իմ որդին ես,— ասավ,— արի Հաղարան Բլբուլին խոսեցրու, որ մեր չորացած այգին կանաչի նորից։

Ջորք ու ժողովուրդ նորից գնացին տաճար։

Սառը տաճարում, վանդակի մեջ, Բլբուլը նայում էր մաշված ու խեղճ։

Եկավ Արին, սեղան ելավ, կանդնեց Բլբուլի առաջ, գլուխ տվեց, ինչպես կարգն է, հետո հանեց նրան վանդակից, թողեց ազատ ու ասավ.

— Բլբուլ ջան, խոսիր, թող մեր չորացած այգին կանաչի նորից։

Ասավ-չասավ, խոսքի կևսը դեռ բերանում, վանդակից ազատված Բլբուլն ուրախ թևին տվեց ու երգեց։

Այդ երգելն էր, մեկ էլ տեսան չոր այգին հագավ զմրուխտ կանաչ. ծաղկեցին թուփ ու ծառ, ծաղիկները բացվեցին, օդը լցվեց հազար ձայնով, հազար ձևով երգեցին թռչունները վազուց լռած, և նրանց ձայնի վրա, հողի միջից, քարի տակից գլուխներ հանեցին նոր ծիլեր ու ծաղիկներ, և ցամաքած շատրվանը զրնգաց ուրախ։

Այստեղ միայն թագավորը տեսավ, որ դա իր որդին է և ուրախացավ աշխարհով մին, ու նրա հետ ամբողջ ժողովուրդը։

Այդ ժամանակ Արին ասավ.

— Դե, հայրիկ, իշխանությունն իմն է երեք օր։

— Ք՛ո՛նն է,— ասավ հայրը,— և թո՛ղ լինի հավիտյան։

Նստեց Արին հոր տեղը ու եղբայրներին կանչեց դատի։

Եկան նրանք՝ Խարին, Չարին, ու խնդրեցին փոքր եղբորից ներող լինի իրենց արածի համար։

— Հիմա ես սրանց ի՞նչ պատիժ տամ,— հարցրեց Արին հորից։

— Ինչ որ դիտես, որդի,— պատասխանեց հայրը ծեր։— Իշխանությունը ք՛ո՛նն է հիմի։

— Դե, քանի որ,— ասավ Արին եղբայրներին,— դուք ինձ չսպանեցիք, ես էլ ձեզ չեմ սպանի։ Խնդրում եմ միայն, ամեն մեկդ առեք ձեր կինը ու հեռացեք մեր երկրից, և քանի ես կամ՝ էլ իրավունք չունենաք այս հողը գալու։

Ասավ, եղբայրները՝ Խարին, Չարին, սևերես ու ամոթով, թողին իրենց տունը հայրական, թողին իրենց երկիրը, առան իրենց կանանց ու գնացին օտար, հեռու երկրներ։

Իսկ ինքը՝ Արին, տեր դարձավ հոր աշխարհին, և նրա այդին, որ միշտ փակ էր ժողովրդի համար, բաց արավ ամենքի առաջ։

Կանչեց բոլորին, ու դրանց հետ բոլոր աղքատներին։

— Դուք,— ասավ,— դուրկ եք եղել այս այգուց, ձե՛րն է,— ասավ,— այսուհետև... Ձերն են աղբյուրը, ծաղիկ, թուփ

ու ծառ ու պտուղները բոլոր... Թո՛ղ չլինի էլ պտուղ խնդրող մուրացիկ ու մուրացիկի անեծք...

Ասավ... ու ժողովուրդն այդ օրվանից ամեն օր ուրախ-ծիծաղ պտտվում է հով ծառերի տակ, թավ ու թավիշ կանաչ-ներում, ծիծաղաձայն շատրվանների և զով աղբյուրների մոտ ու քաղում, վայելում է պտուղներն անմահական...

Իսկ Հաղարան Բլբուլն այնտեղ՝ այգում երգ էր ասում ա-ռավոտից մինչ իրիկուն...

1923